Գրասենյակային տարածքների մաքրության իրականացման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն հրավիրում է մասնագիտացված ընկերություններին մասնակցելու բանկի նոր վարձակալվող Գլխամասային գրասենյակ տարածք մաքրման աշխատանքների իրականացման հրապարակային բաց մրցույթին: Գնառաջարկը պետք է ներառի ամսական սպասարկման ընդհանուր արժեքը հարկերը ներառյալ, ինչպես նաև ծառայության մատուցումն իրականացնող աշխատակիցների նախատեսվող քանակը:

1. Բանկի գրասենյակային տարածք ամենօրյա մաքրման աշխատանքներ
   - գրասենյակային տարածքի աշխատասենյակների, սպասարկման սրահների մաքրություն,
   - ներքին ապակե մակերեսների մաքրություն,
   - մուտքի դռների և ապակիների մաքրություն,
   - գորգային ծածկույթների մաքրում, բծերի հեռացում փոշեկուլով և անհրաժեշտ այլ միջոցներով,
   - հատակի և պատերի սալիկների և կոշտ մակերևույթների մաքրություն,
   - աստիճանավանդակների մաքրում և փոշեզրկում,
   - աղբամանների դատարկում, տոպրակների փոխում և աղբի հեռացում բանկի տարածքից,
   - փափուկ կահույքի մաքրում, բծերի հեռացում փոշեկուլով և անհրաժեշտ այլ միջոցներով,
   - սեղանների, աթոռների, դարակների, պահարանների, տեխնիկայի, դռների շրջանակների, պատուհանագոգերի, բազրիքների, շրիշակների, օդորակման համակարգի արտաքին անցքերի, անջատիչների, վարդակների փոշեզրկում և մաքրում,
   - տարածքին կից ԱԳՄ-ի /բանկոմատների/ և վճարային տերմինալների մաքրում
   - հրատապ դեպքերում անհրաժեշտ մաքրում աշխատատեղերում:

2. Սանհանգույցների ամենօրյա մաքրման աշխատանքներ
   - լվացարանների, զուգարանակոնքերի և այլ սանտեխնիկական սարքավորումների մաքրում և ախտահանում,
   - հայելիներիև մյուս պարագաների մաքրում և փայլեցում,
   - հատակի մաքրում և ախտահանում,
   - դռների բռնակների ախտահանում,
   - հրատապ դեպքերում անհրաժեշտ մաքրում սանհանգույցում:

3. Եռամսյակային իրականացվող մաքրման աշխատանքներ
   - արտաքին և ներքին ապակյա մակերեսների լվացում, անհրաժեշտության դեպքում արդյունաբերական ալպինիստների միջոցով,
   - տարածքների ֆասադային արտաքին գովազդային նյութերի/վահանակների մաքրություն,
   - օդորակիչների ֆիլտրերի մաքրում
   - փափուկ կահույքի քիմ. մաքրում տեղում:

4. Ընդհանուր տարածքի մաքրում /Գեն. Մաքրում/ սահմանված ժամանակացույցով /Ժամանակացույցը անհրաժեշտ է համաձայնեցնել:

5. Շրջակա տարածքի մաքրում /ըստ համաձայնեցված ժամանակացույցի/

- հարակից տարածքի մաքրում,
- ձյան մաքրում հարակից տարածքներից՝ ըստ անհրաժեշտության,
- տարածքը սառույցից և սառցակալումներից մաքրելը,
- մարգագետինների, սիզամարգերի և կանաչ տարածքների ոռոգում,
- մարգագետինների, սիզամարգերի և կանաչ տարածքների մաքրում տերեւներից եւ աղբից:
- արևային վահանակների մաքրում
- Տեխնիկական տարածքների մաքրում

5. Անհրաժեշտ պահանջներ

- Կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել իր կողմից տրամադրվող բարձրորակ ոչ հոտավետ նյութերով և պարագաներով (լվացող, ախտահանող և մաքրող նյութեր, ջնջոցներ, համապատասխան տեխնիկա և այլն),
- Կատարողը պարտավոր է օգտագործել բացառապես հակալերգեն բարձրորակ և համապատասխան մարմինների կողմից լիցենզավորված նյութեր,
- Կատարողը պարտավոր է համագործակցել բանկի տարածքի ընդհանուր սպասարկումը իրականացնող ընկերության պատասխանատուի հետ,
- Կատարողը պարտավոր է Բանկի տարածքում սպասարկող աշխատակցի փոփոխությունը նախապես պարտադիր համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
- Անհրաժեշտ է մաքրության հիմնական աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի չխոչնդոտի բնականոն աշխատանքին, սակայն ոչ շուտ քան առավոտյան 7:00 և ոչ ուշ քան երեկոյան 20:00:
- Սպասարկող աշխատակիցը պետք է ունենա համապատասխան համազգեստ (Uniform)
- Կատարողը պարտավոր է հայտնաբերված կորցրած և մոռացված իրերը, փաստաթղթերը անմիջապես հանձնել անվտանգության ծառայության պատասխանատուին:

Բանկին պատկանող և մաքրման ենթակա ընդհանուր տարածքը կազմում է 14,400 ք.մ, որից օգտակար մակերեսը 7,188քմ: Վերգետնյա կայանատեղիի մակերեսը կազմում է 4,200ք, որից օգտակար մակերեսը կազմում է 2,115քմ: Ստորգետնյա կայանատեղիի մակերեսը կազմում է 1,170 քմ, որից օգտակար մակերեսը կազմում է 250քմ:

Հաղթող ընկերության հետ կկնքվի ծառայությունների մատուցման պայմանագիր 1 տարի ժամկետով՝ երկարացման հնարավորությամբ, բայց ոչ ավել մինչև 3 տարի: